

րէութեան մէջ (ԽԱ. 8) Աստուած Աբրահամը իր բարեկամը կ'անուանէ :

Ճանապարհի ձախին՝ սարահարթին կեդրոնը Հարաւ Ռաւեղի եղ Խալիլ կոչուած հսկայական շինութեան մը ստորին հիմերը կը տեսնուին :

Դէպի արեւելք, այս շէնքէն 60 մ. հեռու կը նըշմարուին 20 մ. երկայնութեամբ եւ 15 մ. լայնութեամբ շինուած քի մը աւերակները : Հոն կողակ դըտնուած չէ, բայց արեւմտեան կողմը գաւիթի (narthex) մը հեռքերը և շինուած քին պատերուն ձևը կը յայտնեն բիւզանդական հին եկեղեցի մը : Այս բոլոր աւերակներուն ամբողջութիւնը կը կոչուի Խիրալի Ռաւեղի եղ Խալիլ : Ասոնցմէ անդին հողը կը սկսի ցածնալ եւ կը դողանայ իբր ձորակ որ կ'ուզուի դէպի հարաւարեւելք Խալիլի եղ Պորվեհ (բւեկնիներու տեղ) անունով :

Հարաւէն 250 մ. դէպի հարաւարեւմուտք կը գտնուի քարայր մը որմէ կը բղխի Այն Սարա կոչուած աղբիւրը : Շրջակայ գագաթը կ'ըսուի իր րաւեհ կամ ձեպիլի եղ Պարրաբ որ հարաւային Պաղեստինի ամենէն բարձր լեռն է : Կ'երկարի մինչև Քերրոն և երկրորդ գագաթ մը Մաւրեհ անունը կը կրէ : Արդէն ԺՆ. դարուն Արաբները Մաւրեհ բառը կը գործածէին Մաւրրիի տեղ : «Էլ Խալիլ, կ'ըսէ Միւճիրէտտին, կը բնակէր ի Մամրէ, վրանի տակ : Այս տեղը մօտ էր մեր Տիրոջ էլ Խալիլի տեղւոյն, հիւսիսային կողմը. հոն կը գտնուէին այգիներ և աղբիւր մը» (Պատմութիւն Երուսաղեմի եւ Քերրոնի, Տպ. Կահիրէ, 424) :

Այս գետնին ամէն անկիւն կը կրէ, ինչպէս կը տեսնուի, Քերրոնի մօտ Աբրահամի բնակութեան յիշատակը : Աւանդութիւնը անփոփոխ ցոյց կուտայ նաև